Հավելված N 532
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ
1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Էկոնոմիկայի նախարարության տնտեսական հետազոտությունների վարչության (այսուհետ՝ Վարչություն) մակրոտնտեսական հետազոտությունների բաժնի (այսուհետ՝ Բաժին) մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.24-Մ6-1) **1.2. Ենթակա և հաշվետու է** Բաժնի մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին: **1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները** Բաժնի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետը: **1.4. Աշխատավայրը** Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան N 5
2. Պաշտոնի բնութագիր
2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները 1) Մասնակցում է հետազոտությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների իրականացման, տնտեսական ազդեցությունների գնահատման աշխատանքներին, 2) Մասնակցում է էկոնոմետրիկ և կառուցվածքային մոդելների կառուցման աշխատանքներին, 3) մասնակցում է տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշերի նախանշման աշխատանքներին, 4) մասնակցում է տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքներին, 5) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով մասնակցում է Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին: **Իրավունքները՝**

• առնչվել արդիական գիտական հենքի հիման վրա մակրոտնտեսական հետազոտություններ, վերլուծություններ և մշտադիտարկումներ, տնտեսական ազդեցությունների գնահատման աշխատանքների իրականացման վերաբերյալ տեղեկատվությանը,
• ծանոթանալ էկոնոմետրիկ և կառուցվածքային մոդելների կառուցմանը, ինչպես նաև դրա հիման վրա համապատասխան գնահատումներին,
• մասնակցել բազմավեկտոր խորքային տնտեսական հետազոտությունների և վերլուծությունների միջոցով տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշերի նախանշման աշխատանքներին,
• ստանալ տեղեկատվություն տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքները,
• առնչվել իր գործառույթների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությանը:

Պարտականությունները՝

• Ուսումնասիրել մակրոտնտեսական հետազոտությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների իրականացման աշխատանքները և դրանց հիման վրա նախապատրաստել համապատասխան զեկույցներ,
• ուսումնասիրել էկոնոմետրիկ և կառուցվածքային մոդելներ կառուցման մեթոդները և ներկայացնել դրանց կիրառման վերաբերյալ առաջարկություններ,
• հավաքագրել տեղեկատվություն տնտեսական զարգացման ռազմավարական ուղենիշերի մշակման համար,
• նախապատրաստել տեղական և միջազգային գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական կենտրոնների և կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ փաստաթղթերը,
• տրամադրել կարծիքներ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Աշխատանքային ստաժ չի պահանջվում

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1.Հաշվետվությունների մշակում
2.Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
3.Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1.Ժամանակի կառավարում
2. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ շփվում է պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն: